ՏՆՏԵՍԱԿԱՆ ՃԳՆԱԺԱՄԵՐԻ ՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐԸ ՄԵՆՏՈՐ ԲՈՒՆԻԱԹՅԱՆԻ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՄԲ

ՌՈԲԵՐՏ ՍԱՐԻՆՅԱՆ

Դարասկզբի հայ տնտեսագիտական մտքի պատմության հիշատակվող անուններից է Մենտոր Աբրահամի Բունիաթյանը։ Նա ապրել է երկար կյանք (1877-1969) և թողել է ընդարձակ գիտական ժառանգություն։ Մ. Բունիաթյանը գրել է տնտեսագիտական ամենատարբեր հարցերի մասին, սակայն նրա գիտական նախասիրությունների մեջ առանձնահատուկ տեղ են գրավում տնտեսական ճգնաժամերի տեսության ու պատմության հարցերը[1]։ 1915 թ. Մոսկվայում, ուր Մ. Բունիաթյանը զբաղեցնում էր համալսարանի տնտեսագիտության ամբիոնի պրոֆեսորի պաշտոնը, լույս է տեսնում նրա «Տնտեսական ճգնաժամեր» հայտնի աշխատությունը։ Դրանում ամբողջական ձևով շարադրվել և իրենց հետագա զարգացումն են ստացել մինչ այդ Մյունխենում նրա հրատարակած «Տնտեսական ճգնաժամերի պատմությունը» և «Անգլիական առևտրական ճգնաժամերի պատմությունը» հետազոտությունների հիմնական դրույթները։ Փորձենք ցույց տալ Մ. Բունիաթյանի վաղ շրջանի հայեցության հիմնական ուղեգծերը և այն առնչությունները, որ նա հայտարերում է ժամանակի տնտեսագիտական մտքի ուղղությունների հետ։

Մ. Բունիաթյանի կարծիքով քաղաքատնտեսության մեջ չկա մի այլ պրոբլեմ, որն այնքան բանավեճերի առիթ տար և իր վրա սևեռեր գիտական մտքի ուշադրությունը, որքան տնտեսական ճգնաժամերի պրոբլեմն է։ Հարցի կարևորությունը պայմանավորված է մի շարք հանգամանքներով։ Ճգնաժամերը խախտում են «արտադրության հաստատված կարգը», փոխելով տնտեսական զարգացման ռիթմը, խորացնելով դասակարգային ու սոցիալական ներհակությունները։ Բացի այդ, դա այն հանգուցային պրոբլեմն է, որի հետ անմիջականորեն առնչվում ու խաչաձևվում են «քաղաքատնտեսության ընդհանուր տեսության» համար կարևոր նշանակություն ունեցող «մի ամբողջ շարք կարևորագույն հարցեր»[2]։ Շրջանառության մեջ դնելով տնտեսական ճգնաժամերի քննությունն ակնկալող ռուս և եվրոպական բազմաթիվ հեղինակների աշխատություններ՝ Մ. Բունիաթյանը փորձում է բացահայտել տնտեսագիտական ուսմունքներից յուրաքանչյուրի առաջադրած մեթոդոլոգիական սկզբունքներն ու դիտակետերը։ Նրա կարծիքով տնտեսական ճգնաժամերի երևույթը չի տեղագրվում ո՛չ Ջ. Միլի ու Ժ. Բ. Սեյի տեսության մեջ, ըստ որի հասարակության մեջ գոյություն ունի «գնորդների ու վաճառողների մետաֆիզիկ հավասարակշռվածություն», ո՛չ Ժ. Սիսմոնդու ու Կ. Ռոդբերտուսի «թերսպառման» տեսության, ո՛չ Կիրխմանի, Մոֆֆատի, Կրոկերի, Մոմմերի ու Հոբսոնի հայեցության մեջ, որն ընդհանուր առմամբ իր մեջ սինթեզում է Լոդերդելի, Ռ. Մալթուսի, Ջոմերսի ու Ժ. Սիսմոնդու հայացքների ինչ-ինչ տարրերը, ո՛չ Մ. Տուգան-Բարանովսկու անհամամասնության տեսության մեջ և այլն և այլն[3]։ Տնտեսագիտական ուսմունքների այս ընդհանուր համակարգում Մ. Բունիաթ-

---

1 Այդ մասին հետաքրքրական դիտողություններ են արված հրապարակի վրա եղած հետազոտություններում (տե՛ս Մ. Հ. Ադոնց, Հայաստանի ժողովրդական տնտեսությունը և հայ տնտեսագիտական միտքը XX դարի սկզբին, Երևան 1968, էջ 355—358, Ն. Ռ. Թովմասյան, Ֆ. Ա. Ֆարմանյան, Մ. Բունիաթյանի և Ջ. Քեյնսի տնտեսական ճգնաժամերի տեսությունների առնչությունների հարցի շուրջ («Հայաստանի ժողովրդական տնտեսություն», 1983, № 12)։

2 M. A. Бунятян, Экономические кризисы. М., 1915, с. V.

3 Նույն տեղում։

յանն առանձնահատուկ տեղ է հատկացնում Ժ. Սիսմոնդին, որի «տեսական սխեմաները» թեև կառուցված էին թույլ հիմքի վրա, այնուամենայնիվ, «արգասարեր» եղան պրոբլեմի հետագա հետազոտության համար։

Ինչ խոսք, Ժ. Սիսմոնդու ծառայությունը որոշակի է կապիտալիստական վերարտադրության հակասությունների և հատկապես արտադրության ու սպառման միշև գոյություն ունեցող հակասության պարզաբանման առումով, սակայն Մ. Բունիաթյանը վրիպում է, ենթադրելով, թե Ժ. Սիսմոնդու ու Կ. Ռոդբերտուսի «գաղափարներն իրենց հետագա զարգացումն ստացան Կ. Մարքսի մոտ»[4]։ Սա նշանակում է նույն առանցքի վրա դնել մեթոդոլոգիական առումով երկու հակադիր տեսություններ։ Ժ. Սիսմոնդին և Կ. Ռոդբերտուսը ճգնաժամերի բացատրության հարցում ելակետ էին ընդունում բաշխման ու սպառման ոլորտները, մինչդեռ Կ. Մարքսը իբրև ելակետ ընդունում էր արտադրությունը, հանգամանք, որը սկզբունքային տարբերություններ է հայտարերում տնտեսական նույն երևույթի մեկնաբանության, վերլուծության մեկնակետի ու հետազոտական շառավիղների իմաստով։ «Ճգնաժամերի այդ երկու տեսությունները, — գրել է Վ. Ի. Լենինը, — որոնց մասին մենք խոսում ենք, նրանց բոլորովին տարբեր բացատրություններ են տալիս։ Առաջին տեսությունը ճգնաժամերը բացատրում է արտադրության և բանվոր դասակարգի սպառման միշև եղած հակասությամբ, երկրորդը՝ արտադրության հասարակական բնույթի և յուրացման մասնավոր բնույթի միշև եղած հակասությամբ։ Հետևաբար, առաջինը երևույթի արմատը տեսնում է արտադրությունից դուրս... երկրորդը՝ հենց արտադրության պայմանների մեջ։ Ավելի կարճ ասած՝ առաջինը ճգնաժամերը բացատրում է անբավարար սպառումով (Unterconsuniplion), երկրորդը՝ արտադրության անկարգությամբ»[5]։

Կ. Մարքսի տնտեսական ուսմունքի հանդեպ Մ. Բունիաթյանի ունեցած նեղ հայացքը բերում է ժամանակի տեսական մտածողության մեջ (Ջ. Լեսկյուր, Ռ. Հիլֆերդինգ, Մ. Տուգան-Բարանովսկի և ուրիշների մոտ) տեղ գտած այն չըմբռնված ընորոշմանը, թե Կ. Մարքսի ճգնաժամերի տեսությունը չի համընկնում «իրականության հետ» և խարսխվելով «շահույթի անկման օրենքի վրա», «շատ բաներում անբավարար է, ոչ ճիշտ և հակասական»[6]։ Մ. Բունիաթյանը չի նկատում, որ շահույթի նորմայի անկման միտման օրենքում առավել հստակորեն է դրսևորվում այն հակասությունը, որ գոյություն ունի արտադրության հասարակական բնույթի և յուրացման մասնավոր կապիտալիստական ձևի միշև։ Այստեղից էլ նրա այն «փաստարկները», թե Կ. Մարքսի ուսմունքը չի արտացոլում տնտեսական կյանքի իրական ընթացքը, քանի որ նախաճգնաժամային փուլում տեղի է ունենում ոչ թե շահույթի անկում, այլ բարձրացում, թե աշխատանքի արտադրողականության բարձրացումը զուգորդվում է ընդհանուր արդյունքի մեջ բանվորների բաժնի քչացումով և կապիտալիստների բաժնի մեծացումով, որը նպաստում է կապիտալից ստացվող շահույթի մեծացմանը և այլն[7]։ Մ. Բունիաթյանը չի տարբերակում շահույթի նորմա և շահույթի մասսա հասկացությունները։ Դրանք ըստ էության նրա մոտ նույնացված են։ Նրան թվում է, որ եթե շահույթի նորման անկման միտում ունի, ապա նույն օրենքին պիտի ենթարկվի նաև շահույթի մասսան։ Մինչդեռ հայտնի է, որ դրանք ցուցաբերում են հակառակ շարժում։ Այս հակասականությունը, ինչպես նկատել է Կ. Մարքսը, բխում է կապիտալիստական կուտակման օրենքի հակասականությունից[8]։ Շահույթի միշին նորմայի անկման միտումի օրենքի՝ Մ. Բունիաթյանի ըմբռնումը պատահական վրիպում չէր, «սա կազմում է այն խորհրդավոր գաղտնիքը, որի լուծ-

---

4 Նույն տեղում, էջ XXII։ Նկատենք, որ հարցի այսպիսի դրվածքը նորություն չէր։ Դարասկզբին նույն զուգահեռը անց էր կացնում նաև Կ. Կաուցկին։

5 Վ. Ի. Լենին, Երկ., հ. 2, էջ 196։

6 М. А. Буниятян, Նշվ. աշխ., էջ XXIV։

7 Նույն տեղում, էջ XXIV—XXVI։

8 Կ. Մարքս, Կապիտալ, հ. 3, առաջին մաս, Երևան, 1947, էջ 232։

ման շուրջ պտույտ է գալիս ամբողջ քաղաքատնտեսությունն Ադամ Սմիթից սկսած, և որ Ադամ Սմիթից հետո տարբեր դպրոցների միջև եղած զանազանությունը հենց այս գաղտնիքի լուծման տարբեր փորձերն են կազմում»[9]։

Մ. Բունիաթյանը տնտեսական ճգնաժամերը համարում է «կապիտալիստական տնտեսության ցիկլային զարգացման շրջադարձային կետերը»։ Կապիտալի ճգնաժամը նրա կարծիքով նոր երևույթ չէ և երբ «տնտեսական օրգանիզմը» խարսխվել է մասնավոր սեփականության ու աշխատանքի բաժանման վրա, այն ներփակել է կապիտալի ճգնաժամի նախնական պայմանները[10]։ Այս հարցադրման մեջ առկա է հակապատմական հայացքը։ Եվ պատահական չէ, որ Մ. Բունիաթյանը կապիտալիզմ էր փնտրում նաև ստրկատիրական Հռոմում, անտիկ աշխարհի պատմության հայտնի մասնագետ Մոմզենի պես արտադրության կապիտալիստական եղանակ տեսնելով ամեն մի «փողային տնտեսության մեջ»[11]։ Այնուամենայնիվ, Մ. Բունիաթյանը գտնում է, որ եթե վաղ ժամանակներում ճգնաժամերն ընդգրկում էին շրջանառության ոլորտը, ապա XVIII դ. վերջերից սկսած՝ կապված տնտեսական կյանքի զարգացման, մասնավոր կապիտալիստական ձեռներեցության ուժեղացման ու կապիտալի արտադրողական կիրառման հետ՝ բնորոշ են դառնում արդյունաբերական ճգնաժամերը, որոնք, իրենց ազդեցությունն ունենալով նաև մյուս բնագավառների վրա, հանդես են գալիս որպես «ընդհանուր տնտեսական ճգնաժամեր»։ Ինչպես տեսնում ենք, Մ. Բունիաթյանն իրավացիորեն տնտեսական ճգնաժամերի առկայությունը կապում է արտադրության ոլորտի հետ, ի տարբերություն վարկադրամային տեսության կողմնակիցների, նշելով, որ «դրամական ու վարկային ճգնաժամերը դրանք լոկ արտադրության և բաշխման պրոցեսների խախտումներն արտացոլող երկրորդական զուգահեռ երևույթներ են»[12]։ Սակայն չի կարելի հավաստի համարել նրա այն կարծիքը, ըստ որի XVIII դ. երկրորդ կեսն Անգլիայի, իսկ այնուհետև մյուս զարգացած երկրների տնտեսական պատմության այն ժամանակամիջոցն է, երբ ցիկլային զարգացումն ընդունում է կանոնավոր բնույթ։ Ճիշտ է, այդ ժամանակաշրջանում ճգնաժամերն ընդունում են որոշ կանոնավոր բնույթ ու թեև զգացվում էին արդյունաբերական հեղաշրջման «ստորերկրյա ցնցումները», այնուհանդերձ դեռևս բացակայում էր ցիկլային զարգացման նյութական հիմքը՝ ֆաբրիկա-գործարանային արտադրությունը։ Հենց այս իմաստով էր Կ. Մարքսը շեշտում, որ «միայն 1825 թվականի ճգնաժամով են սկսվում նրա (կապիտալիստական արդյունաբերության — Ռ. Ս.) արդի կյանքի պարբերական շրջապտույտները»[13]։

Մ. Բունիաթյանը նկատում է, որ տնտեսական ճգնաժամերը կազմալուծում են վերարտադրության բոլոր պրոցեսները, իրենց դրսևորումներն ունենալով տնտեսական կյանքի ամենատարբեր բնագավառներում։ Այս իմաստով նա, տալով ճգնաժամերի «մորֆոլոգիան», հետաքրքրական դիտողություններ է անում դրամական, վարկային, ապրանքային, բիրժային և սպեկուլյատիվ, արդյունաբերական ու ագրարային ճգնաժամերից յուրաքանչյուրի առանձնահատկությունների, ծագման ու ընթացքի վերաբերյալ։ Դրանք, լինելով հասարակական վերարտադրության ընդհանուր համակարգի բաղկացուցիչ մասերը, «տնտեսական երևույթներից կտրած աբստրակցիաներ» են, որոնք իրականում դտնվում են փոխադարձ կապի մեջ։ Մ. Բունիաթյանն արդյունաբերական ճգնաժամերը համարում է ավելի «բարդ երևույթներ», որոնք «երկրի տնտեսական բարեկեցության» վրա ավելի խոր ու բացասական հետևանքներ են ունենում։ Աշխատանքի հասարակական բաժանումը ժողովրդական տնտեսության ճյուղերը դնում է փոխադարձ կախվածության մեջ և այս կամ այն օղակում խախտումը «անբնական» վիճակ է ստեղծում նաև մյուս

9 Նույն տեղում, էջ 194։

10 М. А. Бунятян, նշվ. աշխ., էջ 9—10

11 Կ. Մարքս, Կապիտալ, հ. 3, երկրորդ մաս, Երևան, 1949, էջ 325։

12 М. А. Бунятян. նշվ. աշխ., էջ 84։

13 Կ. Մարքս, Կապիտալ, հ. 1, Երևան, 1954, էջ 12։

ճյուղերի համար։ Այլ դեպքում ճգնաժամը մի ճյուղում կարող է նպաստել մի այլի զարգացմանը, ինչպես «բամբակի սովը» 1760-ական թվականներին, որը եթե մի կողմից «ջլատեց» բամբակեղենի արդյունաբերությունը, ապա մյուս կողմից՝ բրդե և վուշի արդյունաբերության զարգացման խթան հանդիսացավ։ Տնտեսագետներ Բերինգը, Տուկը, Ջալմերսը, Անդերսոնը և ուրիշներ Անգլիայի 1793 թ. տնտեսական ճգնաժամի պատճառը որոնում էին անգլո-ֆրանսիական պատերազմի կամ էլ վարկային սիստեմի մեջ։ Մինչդեռ Մ. Բունիաթյանն իրավացիորեն դրանք համարում է գերարտադրության ճգնաժամեր։ «1793 թվականի ճգնաժամը, — գրում է նա, — ամենածանրն էր Անգլիայում մինչ այդ եղած ճգնաժամերից և առաջին ամենախոշոր արդյունաբերական ճգնաժամը... 1793 թ. ճգնաժամի պատճառը եղել է առևտրի և արդյունաբերության հանկարծակի վերելքը...։ Ջնայած սպառման հարաբերական մեծ աճին, արտադրանքն ավելացել էր անհամեմատ մեծ մասշտաբներով, քան ներքին ու արտաքին շուկաների տարողությունն էր։ ...Անկումը պայմանավորված էր ներքին ու արտաքին շուկաները բրիտանական ապրանքների գերլցումով, բայց չի հանդիսացել դրամական ճգնաժամի կամ պատերազմի ազդեցությամբ տնտեսական գործունեության թուլացման հետևանքը»[14],

Կապիտալիստական վերարտադրության բոլոր ներհակությունները դրսևորվում են արդյունաբերական ցիկլի ճգնաժամի փուլում։ Թեև դեպրեսիան դեռևս բնորոշվում է արտադրության լճացումով, ապրանքների գների ցածր մակարդակով ու շահույթի ցածր նորմայով, այնուամենայնիվ, արտադրության չափերի կրճատման հետևանքով որոշ հավասարակշռվածություն է ստեղծվում առաջարկի ու պահանջարկի միջև և աշխուժացման ու վերելքի փուլին անցնելու պայմաններ են առաջանում։ Մ. Բունիաթյանը հատկապես կարևոր է դիտում հիմնական կապիտալի նորացման հարցը, հանգելով մի կարևոր հետևության, ըստ որի տեխնիկական կատարելագործությունները հնարավորություն են տալիս «արդյունքներն էժանացնելով, սպառումն ընդլայնելով և նոր պահանջմունքներ ծնելով, դնելու նոր շրջանի վերելքի հիմքը»[15], Նա գտնում էր, թե իբր Ֆ. Էնգելսն արդյունաբերական ցիկլի դեպրեսիայի փուլը հավասարեցնում է ճգնաժամի փուլի հետ և թերևս այդ պատճառով էլ XIX դ. առաջին կեսի Անգլիայի տնտեսական ճգնաժամերը դիտում որպես հնգամյա կտրվածքով կրկնվող ճգնաժամեր[16]։ Մինչդեռ Ֆ. Էնգելսը ցույց է տալիս արդյունաբերական ցիկլի առանձնահատկությունները։ Եթե նա 1847-1867 թթ. ցիկլը համարում էր «վճռականորեն տասնամյա» ցիկլ, ապա 1815-1847 թվականների «համաշխարհային առևտրի մանկության ժամանակի» ցիկլերը համարում է «մոտավորապես հնգամյա ճգնաժամեր»։ Եվ իրոք, ինչպես վկայում է Անգլիայի տնտեսական զարգացման պատմությունը, 1815-1847 թթ. բոլոր խոշոր ճգնաժամերը միջնորդվել են հնգամյա ճգնաժամերով։ Բանն այն է, որ XIX դ. երկրորդ կեսին, կապված համաշխարհային շուկայի ստեղծման հետ, արդյունաբերական ցիկլի փուլերը ձեռք են բերում որոշ առանձնահատկություններ։ Հենց այս նկատի ուներ Ֆ. Էնգելսը. երբ գրում էր, թե «Պարբերական պրոցեսի սուր ձևն իր մինչայժմյան տասնամյա ցիկլով, ըստ երևույթին, տեղի է տվել ավելի խրոնիկական, ավելի երկար ձգձգվող և տարբեր ժամանակներում արդյունաբերական տարբեր երկրների վրա տարածվող մի հերթափոխության, որն արտահայտվում է գործերի համեմատաբար կարճ, թույլ լավացումով և համեմատորեն ավելի երկարատև, լուծումն չգտնող ճնշումով»[17],

Գերարտադրության ճգնաժամերը բնորոշ են ոչ միայն կապիտալիստական արդյունաբերությանը, այլև գյուղատնտեսությանը։ Մ. Բունիաթյանը դրանք անվանում է «էկզոգենետիկ բնույթի» ճգնաժամեր, որոնք թեև տեղի են ու-

---

14 Մեջբերումը տե՛ս Л. А. Мендельсон, Теория и история экономических кризисов и циклов, т. 1, М., 1959, с. 278.

15 М. А. Бунятян, նշվ. աշխ., էջ 69։

16 Նույն տեղում, էջ 15։

17 Կ. Մարքս, Կապիտալ, հ. 3, երրորդ մաս, էջ 29։

նենում ոչ այնպիսի պարբերականությամբ, ինչպես արդյունաբերության մեջ, սակայն իրենց ազդեցությունն ունեն «տնտեսական կյանքի ցիկլային զարգացման վրա»։ Ինչպես և շատ տնտեսագետներ (Ս. Ջևոնս, Վ. Զոմբարտ, Մուր), նա ընդունում էր ցիկլային տատանումները գյուղատնտեսության մեջ, սակայն գյուղատնտեսական արդյունքների և գների տատանումները կախման մեջ դնելով բնակլիմայական պայմաններից, ճգնաժամերը ներկայացնում էր որպես բերքատվության տատանումների հետևանք։ «Ագրարային ճգնաժամերն այսպիսով, — գրում է Մ. Բունիաթյանը, — ըստ իրենց ծագման ներկայացնում են որպես կա՛մ արտադրության, կա՛մ բաշխման ֆենոմեն։ Առաջին դեպքում այն պայմանավորվում է արտադրությունը քայքայող անբարենպաստ մթնոլորտային պայմաններով, երկրորդում՝ այն ներկայացնում է ժամանակակից տնտեսական կազմակերպության և գնի բաշխման ֆունկցիայի հետևանք, որն առատ բերքատվության կամ արտադրության ընդլայնման ժամանակ անբարենպաստ է անդրադառնում գյուղական սեփականատերերի վրա և նվազեցնում է նրանց բաժինը հասարակական արդյունքում»[18]։

Ինչպես տեսնում ենք, Մ. Բունիաթյանը թեև ագրարային ճգնաժամերի առկայությունը կապում է կապիտալիստական տնտեսակարգի հետ, դիտողություններ անում այդ ճգնաժամերի երկարատև բնույթի, ռենտայի չափերի, գների տատանումների և այլ հարցերի մասին, այնուամենայնիվ, որոշակի տեղ է հատկացնում բնակլիմայական գործոնին, փաստորեն արտադրության և ըստպառման հակասությունն ածանցելով վերջինից։

Մ. Բունիաթյանը ժողովրդական տնտեսության պարբերական ցնցումների պատճառները մի մասով էլ պայմանավորում է տնտեսական կյանքի կազմակերպական տեխնիկական թերություններով։ «Ժամանակակից տնտեսական կազմակերպությունը, — գրում է նա, — հեռու է այնպիսին լինելուց, որ երաշխավորի տնտեսական կյանքի կատարյալ և ներդաշնակ զարգացումը։ Ընդհակառակը, այն իր մեջ ամփոփում է նրա ներդաշնակ զարգացմանը և տնտեսական խանգարմանը հեշտ առիթ տվող մի շարք մոմենտներ»[19]։ Մասնավորապես խոսքը վերաբերում է մասնավոր սեփականության և աշխատանքի բաժանման սկզբունքների առկայությանը։ Ինչպես արդեն նկատել ենք, Մ. Բունիաթյանը տնտեսական ճգնաժամեր էր փնտրում այն բոլոր տնտեսաձևերում, որոնցում առկա են այդ երկու սկզբունքները։ Սակայն աշխատանքի բաժանման խորացումը կապիտալիզմի պայմաններում «օրգանական կապ» ու «կախվածություն» է ստեղծում ձեռնարկությունների միջև, որոնք իրենց «տընտեսական ինքնորոշման մեջ մնալով իրարից անկախ» միաժամանակ հանդես են գալիս որպես «հասարակական տնտեսության անբաժանելի մասեր»։ Հասարակական արտադրության ղեկավար սկզբունքը դառնում է ոչ թե ապրանքի, այլ «արժեքի» արտադրությունը, իսկ որքանով այն իրականացվում է տարերային ձևով՝ առաջ է գալիս հակասություն մի կողմից մասնավոր տնտեսական շահերի, իսկ մյուս կողմից՝ դրանց ու հասարակական շահերի միջև, որը դրսևորվում է հասարակական արտադրության ու պահանջմունքների ու սպառման միջև գոյություն ունեցող հակասության ձևով։ Իսկ որքանով բացակայում է «ժողովրդատնտեսական օրգանիզմի առանձին անդամների տնտեսական գործունեությունը՝ կարգավորող մարմինը», ուստի և տնտեսական կյանքը չի կարող զերծ լինել խափանումներից։ Եթե արտադրության և սպառման միջև հակասության վերաբերյալ Մ. Բունիաթյանի դատողությունները որոշակի արժեք են ներկայացնում, ապա ճիշտ չպիտի համարել նրա մտորումները գների մեխանիզմի մասին որպես արտադրության ու սպառման «հավասարակշռվածությունը» խախտող աղբյուրի, առավել ևս երբ գների հիմքում դրվում է առաջարկի ու պահանջարկի օրենքը՝ սինթեզված «ավստրիական դպրոցի» սահմանային օգտակարության տեսությամբ։ Հարցադրումը պատահական չէր։ Հայտնի է, որ XVIII դ. սկսվում է հոգեբանության առանձնացումը իբրև գի-

---

18 М. А. Бунятян, նշվ. աշխ., էջ 80։

19 Նույն տեղում, էջ 91։

ության առանձին բնագավառի և արդեն XIX դ. երկրորդ կեսին և հատկապես XX դ. սկզբներին կապված էքսպերիմենտալ հոգեբանության առաջացման հետ, սկսվում է այդ գիտության տարեգրությունը։ Ի հայտ է գալիս հոգեբանական դպրոցը սոցիոլոգիայում, որը հասարակական երևույթների հիմքում դնում էր անհատի կամ մարդկանց առանձին խմբերի ու կոլեկտիվների հոգեբանական գործոնները։ Էքսպերիմենտալ և դիֆերենցիալ հոգեբանության ձեռքբերումները սկսում են օգտագործել էկոնոմիկայում և արդյունաբերության մեջ[20]։ Այդ հանգամանքն անհետևանք չմնաց նաև տնտեսական գիտության բնագավառում։ Փորձեր էին արվում տնտեսական երևույթների պատճառականական կապի ու կախվածության հարցերը մեկնաբանել հենց այդ դիտակետից։ Այս առումով էլ Մ. Բունիաթյանը շեշտում է, որ Ս. Ջևոնսի, Կ. Մենգերի ու Ա. Վալրասի «նոր տեսությունը» իր տարողունակությամբ հանդերձ թեև չի ընդգրկում տնտեսական բոլոր երևույթների բացատրությունը ու թեև «այդ ճիշտ ճանապարհը որոշված է ընդհանուր գծերով», սակայն միակն է, որը հնարավորություն է տալիս տեսականորեն հիմնավորել բարիքների համընդհանուր արժեքվման, հետևապես նաև «համընդհանուր գերարտադրության» հասկացությունները, ինչպես նաև բացատրել գների կազմավորումն ու շարժումը և վերջինիս հետ կապված բաշխման շարժման հետևանքները, իբրև «կոնյուկտուրայի տեսության անհրաժեշտ հիմքի»[21]։ Միանգամայն որոշակի է տնտեսագետի այն գլխավոր տեսական ելակետը, որից սկսվում է հարցի բացատրությունը։ Ինչպես և ավստրիական դպրոցի ներկայացուցիչները, Մ. Բունիաթյանը ապրանքի արժեքի հարցը դիտարկում է սուբյեկտիվ արժեքի և օբյեկտիվ արժեքի կարվածքով։ Վկայակոչումներ անելով Կ. Մենգերից և Ս. Ջևոնսից, նա տարբերակում է բացարձակ սուբյեկտիվ արժեք և հարաբերական սուբյեկտիվ արժեք հասկացությունները։ Առաջինը տվյալ անհատի համար որոշակի բարիքի նշանակությունն է՝ կախված պահանջմունքի կարևորության աստիճանից և տվյալ ժամանակում այդ բարիքի առկա քանակի ու պետքականության մեծության հարաբերակցությունը, որը որպես արժեք տվյալ սուբյեկտի համար ներկայացնում է հայտնի բացարձակ մեծություն։ Իսկ հարաբերական սուբյեկտիվ արժեքն այդ բարիքի (մյուսների հետ համեմատած) այն նշանակությունն է սուբյեկտի համար, որը կապված է նրա օգտակարության և հազվագյուտության հետ։ «Այսպիսով, — եզրակացնում է Մ. Բունիաթյանը, — արժեքը հանդիսանում է ոչ թե բարեկեցության, այլ մարդկանց անբավարարվածության չափանիշը։ Օգտակարությունը, ճիշտ է, հանդիսանում է բարիքների արժեքի անհրաժեշտ պայմանը, բայց վերջինիս աղբյուրը բարիքների անբավարարությունն է կամ հազվագյուտությունը... հետևապես հենց որ պահանջմունքների բավարարումը դառնում է լրիվ և իջնում է բարիքների սահմանային օգտակարությունը, ընկնում է և դրանց արժեքը»[22]։ Արժեքի վերաբերյալ Մ. Բունիաթյանի դիտողությունները չեն արտացոլում տնտեսական պրոցեսների դիալեկտիկան և այդ պրոցեսների ճանաչողությունը դնում են այլ տարածքի մեջ։ Արժեքի հարցը հանգեցնել իրերի հանդիպ մարդկանց ունեցած հարաբերություններին, այն նշանակությանը, որ ունեն նյութական բարիքները սուբյեկտիվ բավարարվածության տեսանկյունից, նշանակում է տնտեսական կատեգորիաները ներկայացնել որպես բովանդակազուրկ հասկացություններ։ Տնտեսվարող անհատը սոցիալական էակ է և իր, պահանջմունքներով հանդերձ պետք է դիտվի կոնկրետ հասարակական տնտեսական հարաբերությունների մեջ։ Կ. Մարքսը գերմանացի տնտեսագետ Ա. Վագների «Քաղաքատնտեսության դասագրքի» վերաբերյալ դիտողություններում նկատել է, որ մարդը, եթե նկատի է առնվում բնությանը դիմակայած մեկուսացած մարդուն, ապա նրան պետք է դիտել որպես ոչ հոտային կենդանի, իսկ եթե այդ մարդն ապրում է հասարակության որևէ ձևում, ապա իբրև

---

20 М. Г. Ярошевский, История психологии, М., 1976, с. 298.

21 Մ. Ա. Բունիաթյան, նշվ. աշխ., էջ 110, XXX։

22 Նույն տեղում, էջ 113։

ելակետ պետք է ընդունել հասարակական մարդու որոշակի բնույթը, այսինքն հասարակության որոշակի բնույթը, որում նա ապրում է[23]։

Մ. Բունիաթյանը սուբյեկտիվ արժեքի տեսությունից անցնում է օբյեկտիվ արժեքի տեսությանը, այսինքն բարիքների հասարակական արժեքի կազմավորման բացատրությանը։ Նա գտնում է, որ ճիշտ կլիներ սուբյեկտիվ դպրոցի տեսությունը համալրել «բարիքների բացարձակ հասարակական արժեք» հասկացությամբ, որն իր բովանդակությամբ համապատասխանում է սուբյեկտիվ բացարձակ արժեք հասկացությանը և որը որոշվում է սահմանային հասարակական օգտակարությամբ ճիշտ այնպես, ինչպես բացարձակ սուբյեկտիվ արժեքը որոշվում է սուբյեկտիվ սահմանային օգտակարությամբ։ Մ. Բունիաթյանի մոտ, ինչպես դա Բեմ-Բավերկի մոտ էր, օբյեկտիվ արժեքը ոչ այլ ինչ է, քան «սուբյեկտիվ արժեքների» բախումից առաջացած արժեք, որի հիմքում ընկած է բարիքների հասարակական սահմանային օգտակարությունը։ «Վերջինս, — գրում է Մ. Բունիաթյանը, — հասարակության համար կատարում է նույն ֆունկցիան, ինչը և սուբյեկտիվ սահմանային օգտակարությունն անհատական տնտեսության համար, այսինքն այն որոշում է բարիքների բացարձակ հասարակական արժեքը և դրա միջոցով կարգավորում է ժողովրդական տնտեսության մեջ արտադրությունն ու սպառումը»[24]։ Եթե նրա «սուբյեկտիվ արժեքի» հիմքում ընկած է սահմանային օգտակարությունն առանձին անհատի համար, ապա հասարակական սահմանային օգտակարությունը որոշվում է սահմանային գնորդով։ Իրավացի է Վ. Աֆանասևի այն նկատումը, որ բուրժուական քաղաքատնտեսության մեջ սուբյեկտիվ դպրոցն իր հիմքում ունի երկու հիմնական իմացաբանական արմատ։ Դա մի կողմից մարդկանց հոգեբանությունից իրականում գոյություն ունեցող տնտեսական պրոցեսների (գերազանցապես դրանց ձևերի) կախվածության գերագնահատումն է, մյուս կողմից՝ ճանաչման՝ պրոցեսի այն մոմենտի բացարձակացումը, որը կապված է նրա մեջ իրականության ընկալման սուբյեկտիվ առանձնահատկություններ մտցնելու հետ[25]։ Թերևս դրանով պիտի բացատրել այն հանգամանքը, որ անդրադառնալով սուբյեկտիվ արժեքի փոփոխությանը, Մ. Բունիաթյանը բերքատվությունից կախված հացահատիկի գների կազմավորումը բացատրում է Արթուր Կինգի կողմից ձևակերպված և Ս. Ջևոնսի կողմից մաթեմատիկորեն արտահայտված այն օրենքով, ըստ որի բերքատվության փոփոխությունը թվաբանական պրոգրեսիայով, գինը փոփոխում է մոտավորապես երկրաչափական պրոգրեսիայով, բերքատվության նկատմամբ հակառակ ուղղությամբ։ Ընդ որում, նա գտնում է, որ այդ օրենքը զարմանալի համապատասխանություն է հայտաբերում Վեբեր-Ֆեխների պսիխո-ֆիզիկական այն հիմնական օրենքի հետ, ըստ որի զգացողությունները աճում կամ թուլանում են երկրաչափական պրոգրեսիայով, երբ այդ զգացողություններն առաջ բերող գրգռման ուժը մեծանում կամ փոքրանում է թվաբանական պրոգրեսիայով։ Այստեղից էլ պսիխո-ֆիզիկական օրենքը արտահայտելով արժեքի տեսության լեզվով, Մ. Բունիաթյանը նույն տրամաբանությամբ ձևակերպում է սուբյեկտիվ արժեքի սկզբունքը[26]։ Մ. Բունիաթյանի մոտ փաստորեն կապիտալիստական ապրանքային արտադրության իմանենտ կատեգորիաներին փոխարինում են վերապատմական հասկացությունները։ «Հասարակական բացարձակ արժեքի» նրա կոնցեպցիան ենթադրում է ոչ միայն աշխատանքի պրոցեսի՝ որպես անհատների հասարակության հետ ունեցած կապերի ու «որպես արտադրողների սոցիալական կապերի ու ինտեգրացիայի կարևորագույն օղակի»[27] անտեսում, այլև աշխատանքի՝ իբրև արժեքի, մեծության սուբստանցի

---

[23] К. Маркс, Ф. Энгельс, Соч., т. 19, с. 376—377.

[24] М. А. Бунатян, նույն տեղում, էջ 115։

[25] Вл. Афанасьев, Этапы развития буржуазной политической экономии, М., 1971, с. 310.

[26] М. А. Бунятян, նշվ. աշխ., էջ 144—146։

[27] Р. Штольберг, Социология труда, М., 1982, с. 12.

անտեսում։ Այն ըստ էության խարսխված է առաջարկի ու պահանջարկի տեսության վրա, որի համաձայն ապրանքների գներն ուղղակի համեմատական են այդ ապրանքների նկատմամբ եղած պահանջարկին և հակադարձ համեմատական են դրանց քանակությանը։ Նույնն էր պնդում նաև Մ. Բունիաթյանը. սակայն նրա ելակետն իրերի սուբյեկտիվ գնահատումների սկզբունքն էր, որպես իրար հավասարակշռող սկզբունքների։ Հարցն այդ կտրվածքով էր դնում նաև Բեմ-Բավերկը, որը նպատակ ունենալով բացահայտել «օրթոդոքսալ քաղաքատնտեսության» նկատմամբ իր դոկտրինայի տարբերությունները, գրում էր, թե «...հին տեսության բոլոր թերությունները բխում են մի աղբյուրից, ուստի և դրանք կարելի է արմատախիլ անել մի հարվածով. ամբողջ ուսմունքի կենտրոնում հարկավոր է դնել այն միտքը, որ գինը ամբողջապես հանդիսանում է փոխանակությանը մասնակիցների կողմից նյութական բարիքների սուբյեկտիվ գնահատումների արդյունքը»[28]։ Մ. Բունիաթյանը թեև փողի վերաբերյալ արտահայտում է առանձին «ռացիոնալ մտքեր», սակայն դրանք ընդհանուր առմամբ տեղադրվում են սուբյեկտիվ դպրոցի քառակուսում։ Ավելին. Մ. Բունիաթյանը սուբյեկտիվ դպրոցի տեսաբանների թերություններից էր համարում այն, որ նրանք «խուսափում կամ դժվարանում էին փողի արժեքի կազմավորումը բացատրել տնտեսական բարիքների արժեքի կազմավորման սահմանային օգտակարության ընդհանուր օրենքին համապատասխան։ Մինչդեռ միայն այդ ձևով փողը կարելի է դարձնել ոչ միայն գների չափ, այլ նաև բարիքների արժեք»[29]։ Այստեղից էլ Մ. Բունիաթյանի՝ փողը որպես տեխնիկական միջոց դիտելու մտայնությունը, որը տնտեսական բարիքների գնահատությունը դարձնում է միատարր և չափում դրանց «փոխանակային արժեքը»։ Ու թեև տնտեսագետը խոսում է փողի արժեքի ու ապրանքների գների շարժման ինչ-ինչ կողմերի մասին, բոլոր դեպքերում նրա դատողությունները ենթակա են սահմանային օգտակարության չափանիշներին։ Այստեղից էլ գների շարժման այն բացատրությունը, թե «բարիքների քանակի սաստիկ ավելացման ժամանակ, դրանց սահմանային օգտակարությունն առանձին տնտեսություններում պետք է իջնի, քանի որ այդ բարիքների վերջին քանակությունները համապատասխանելու են դրանց նկատմամբ նվազ ինտենսիվություն ունեցող անհրաժեշտությանը։ Հետևապես պետք է իջնի և բարիքների հասարակական սահմանային օգտակարությունը։ Վերջինս, ընդհակառակը, բարիքների քչացման կամ նույնիսկ սպառման նորմալ աճին չհամապատասխանող արտադրության աճի նշանակալից դանդաղեցման ժամանակ պետք է բարձրանա։ Բարիքների հասարակական արժեքի այդ տատանումներն էլ իրենց արտահայտությունն են գտնում դրանց գների պարբերական տատանումներում»[30]։ Ստացվում է, որ ապրանքների հասարակական արժեքը որոշվում է որանց սահմանային օգտակարությամբ, իսկ դա էլ պայմանավորում է «գների պարբերական շարժման» պրոցեսը։ Մ. Բունիաթյանը փաստորեն «ջրջանառության պրոցեսի մեջ մտցնում է ապրանքներն առանց գնի, իսկ ոսկին ու արծաթը՝ առանց արժեքի»[31]։ Այստեղից էլ նրա տուրքը փողի քանակային տեսությանը։

Մ. Բունիաթյանը նյութական բարիքները բաժանում է անմիջական սպառման առարկաների և արտադրական սպառման առարկաների։ Վերջիններս այսպես կոչված «բարձրագույն կարգի բարիքներ» են, որոնց միջոցով իրականացվում է սպառման առարկաների արտադրությունը։ Մ. Բունիաթյանը կրկնում է Բեմ-Բավերկի այն թեզը, թե «բարձրագույն կարգի բարիքները» ածանցյալ արժեք ունեն և կախված են դրանց միջոցով արտադրվող սպառողական բարիքների արժեքից։ Նրա կարծիքով տեխնիկայի վրա հիմնված «արտադրության եղանակը» դրական կողմերի հետ միասին, ունի նաև իր թերությունները։ Այն մեծապես նպաստում է «արտադրության աճին», բայց պահանջում է

---

28 Бем-Баверк, Основы теории ценности хозяйственных благ, Л., 1929, с. 186.

29 М. А. Бунятян, նշվ. աշխ., էջ 120։

30 Նույն տեղում, էջ 136։

31 Կ. Մարքս, Քաղաքատնտեսության քննադատության շուրջը, Երևան, 1948, էջ 196։

«նախնական...նշանակալից ծախսեր», որոնք հետագայում թեև արագացնում են «վերջնական արդյունքների արտադրությունը, բայց իրենք իրենց իրագործման համար պահանջում են ժամանակ և հաճախ բավական երկարատև»։ Հանգամանք, որը հանգեցնում է վերջնական արդյունքների արտադրության և «արտադրության պրոցեսի ծագման մոմենտի» միջև գոյություն ունեցող ժամանակի տարածքի մեծացմանը։ Արտադրության պրոցեսը երկարում է, քանի որ այն հաճախ տրոհվում է մի շարք միջանկյալ ստադիաների, որոնց միջոցով արտադրողական ուժերը «բյուրեղանում են վերջնական արդյունքներում»։ Մինչդեռ «փոխանակային տնտեսության համար արտադրության պրոցեսի այդպիսի երկարումն ունի այն մեծ անհարմարությունը, որ սպառողական և արտադրական բարիքների արժեքների կազմավորման գործոնների փոխադարձ կապը կտրվում է և արտադրությանը զրկում նրա ամբողջ ընթացքում արժեքի սկզբունքը խիստ վերահսկողության ենթարկելուց»[32]։ Այսպիսով, ըստ Մ. Բունիաթյանի, արտադրության սկիզբը խարսխվում է բարիքների քանակի և դրանց անհրաժեշտության միջև հայտնի հարաբերակցությունից բխող սպառման բարիքների արժեքի ու արտադրության վերջում ենթադրվող արժեքի վրա, որը հաճախ իրար չի համապատասխանում։ Բանն այն է, որ արտադրության և սպառման հավասարակշռվածության խախտման հետևանքով սպառողական բարիքների գների բարձրացումը, ինչպես գա տեղի է ունենում դեպրեսիայի վերջում, ձեռնարկատերերին դրդում է ավելացնելու այդ բարիքների արտադրությունը, որը ենթադրում է նոր գործարանների ու ֆաբրիկաների շինարարություն, արտադրության տեխնիկական վերազինում։ Սակայն վերելքի ժամանակ նախորդ տարիների արտադրական հզորությունների շահագործման հետևանքով խիստ ավելանում է սպառման առարկաների արտադրությունը, հանգեցնելով դրանց սահմանային օգտակարության իջեցմանը։ Իսկ քանի որ «բարձրագույն կարգի բարիքների արժեքը» տրոշվում է «առաջին կարգի» բարիքների արժեքով, հետևապես իջնում է նաև առաջինների հասարակական արժեքը։ Սպառման առարկաների արտադրության համար արտադրության միջոցների արտադրության պրոցեսի երկարությունը (Մ. Բունիաթյանը այս հարցում զուգահեռ է անցկացնում գյուղատնտեսական արտադրության հետ) հնարավորություն չի տալիս ժամանակին հարմարվելու հասարակական պահանջներին, խախտվում է արտադրության և սպառման համամասնական զարգացումը, ապագա պահանջների հաշվառումը[33], որը հանգեցնում է գերարտադրության։ Ինչպես արդեն նկատել ենք, Մ. Բունիաթյանը եթե մի կողմից դեպրեսիայից դուրս գալու ելքն աղերսում էր հիմնական կապիտալի նորացման փաստի հետ, ապա մյուս կողմից՝ սերտ կապ էր տեսնում «ճգնաժամերի և տեխնիկական կատարելագործությունների միջև»[34]։ Այդ պատճառով էլ, եթե, մի կողմից, նա տնտեսական ճգնաժամերը դիտում էր որպես կապիտալիզմին իմանենտ երևույթ, ապա մյուս կողմից՝ որպես ընդհանրական։ Եվ այսպես, եզրակացնում է Մ. Բունիաթյանը, «Անսահմանափակ կապիտալիզացիայի ենթակայության տակ գտնվող արտադրողական ուժերին ներհատուկ զարգացման ձգտումը մի կողմից և քիչ էքսպանսիվ սպառմանը համապատասխան արտադրության կրճատման անհրաժեշտությունը մյուս կողմից, դժվարացնում են տնտեսական կյանքի հավասարակշռվածության պահպանումը և առաջ են բերում նրա պարբերական վերելքներն ու վայրէջքները»[35]։ Նկատենք, որ Մ. Բունիաթյանի շատ հարցադրումներ ու լուծումներ ընդհանրություններ են հայտաբերում նույն ժամանակամիջոցում լույս տեսած ֆրանսիացի տնտեսագետ Ալբերտ Աֆտալիոնի «Գերարտադրության պարբերական ճգնաժամերը» աշխատության հետ[36]։

---

32 М. А. Бунятян, նշվ. աշխ., էջ 138։

33 Նույն տեղում, էջ 180, 173—174։

34 Նույն տեղում, էջ 140։

35 Նույն տեղում, էջ 234, 267։

36 Альберт Афтальон, Периодические кризисы перепроизводства, т. I, М.—Л., 1930; т. II, М.—Л., 1930.

Տնտեսական ճգնաժամերի հարցը մոնոպոլիստական կապիտալիզմի ժամանակաշրջանում ստանում է նոր մեկնաբանություն։ Արդեն XIX դ. վերջերին և XX դ. սկզբներին տնտեսագետներ Ռ. Զոմբարտը, Ռ. Շտոլցմանը, Շուլցե-Գեվերնիցը, Ռ. Լիֆմանը, Ռ. Հիլֆերդենտը և շատ ուրիշներ մոնոպոլիաներին վերագրում էին այնպիսի տնտեսական ու սոցիալական ֆունկցիաներ, թե իբր կապիտալի համակենտրոնացման ու մոնոպոլիաների զարգացման հետ վերանում են կապիտալիզմի ներհակությունները՝ ապահովելով արտադրության պլանաչափ զարգացումը։ Այս հարցում Մ. Բունիաթյանի հայացքները հակասական են։ Նա ճիշտ է նկատում, որ մոնոպոլիստական միավորումները, ինչպես և ազատ մրցակցության պայմաններում մանր արտադրողները, նույնպես ենթակա են կոնյուկտուրայի օրենքներին, որ դրանք չեն կարող վերացնել մրցակցությունն ու անարխիան, արմատական փոփոխություններ մտցնել «տնտեսական կյանքի էվոլյուցիայում» կամ խոչընդոտել գերարտադրության ճգնաժամերի առաջացմանը և կանխելու «տնտեսության ցիկլային զարգացումը»[37]։ Այնուհանդերձ նա չէր ժխտում, որ մոնոպոլիստական միավորները տնտեսական զարգացման պրոցեսներում առաջ են բերում «նոր գծեր» և «վերացնելով կամ սահմանափակելով մրցակցությունը» արտադրությանը տալիս են պլանաչափ բնույթ և վերականգնում «կապիտալիզացիայի և կապիտալի սպառման պրոցեսի միջև հավասարակշռությունը»[38]։

Այսպիսին են տնտեսական ճգնաժամերի վերաբերյալ Մ. Բունիաթյանի հայացքները, որոնք տեղադրվում են դարասկզբի բուրժուական տնտեսագիտական մտքի տիրապետող հոսանքների ընդհանուր հայեցության մեջ, որն իր հարցադրումներով որոշակի կապ է հայտնաբերում արդի բուրժուական քաղաքատնտեսության հետ։ Նրա տեսական արծարծումները հետաքրքրական են դարասկզբի հայ տնտեսագիտական մտքի և վերջինիս համաշխարհային տնտեսագիտական մտքի հետ ունեցած առնչությունների որոշարկման տեսակետից։

ВОПРОСЫ ТЕОРИИ И ИСТОРИИ ЭКОНОМИЧЕСКИХ КРИЗИСОВ В ИССЛЕДОВАНИИ МЕНТОРА БУНЯТЯНА

РОБЕРТ САРИНЯН

Резюме

Ментор Бунятян—один из известных представителей армянской экономической мысли начала XX в. В его научной деятельности этого периода занимают особое место вопросы теории и истории экономических кризисов. Считая экономические кризисы «поворотными пунктами» циклического развития капиталистического хозяйства», он делает интересные замечания об особенностях, возникновении и течении денежных, кредитных, товарных, биржевых, спекулятивных, промышленных и аграрных кризисах.

Несмотря на противоречивость, воззрения М. Бунятяна представляют определенный интерес с точки зрения определения сфер армянской экономической мысли и взаимосвязи последней с мировой экономической мыслью.

---

37 М. А. Бунятян, նշվ. աշխ., էջ 237—238։

38 Նույն տեղում, էջ 235—236։